

2/2

ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուկարիոյ համար
ճարեկան Ծրք 10
վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲՍԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճաքաք օրերը: Ծա-
նոցման տողը 10 Սանդիմ: Երու թիւ ա-
ռաջ հրատարակուած թերթը 40 Սանդիմ:
Զհրատարակուած գրու թիւ նը եւ յսրուիր:

Հասցե
DIRAN PAPA ZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

Մ Ա Շ Ա Գ Ո Յ Ժ

Ը Ն Թ Ե Ր Յ Ա Ր Ա Ն Ի

ՎԵՐԻՉ ԴԱՇՏՕՆԵՌԻԹԵԱՆ

1600 ՅԻ



Յետ 1600 թրանք պատրաստ գրամի ըստ
կամս գործածութեան տաժանեղի աշխատու-
թեան եաղորեացեալ Միսեի հիւանդու-
թեան՝ անցեալ կիրակի վերջնապէս իւր շունչը
արձակեց, թախլան նետեց, անմխիթար սուգ և
'ի թախի՞ն համակելով իւր որբացեալ խաւա-
րակուռն ընթերցարանին պատերը, ամիսնե-
րով քարիւղի երես չի տեսնող ու առանց պատ-
րոյգի մնացող դամբարը, երկու սեղանները,
վեց աթոռակները, փոշիապատ պարսպ պատ-

կառելի գրադարանը ու գրանը վրայ կա-
խուած «Բաց է» «Գոց է» ին տախտակը:

Յուդարկաւորութեան հանդէսը կա-
տարուեցու առաջնորդութեամբ միմիայն մո-
մակալ Բոժոժիկի, վասն զի, հակառակ կրկ-
նակի հրաւիրանաց, ոչ ոք ներկայ չի գըտ-
նուեցաւ, ու մարմինը՝ Աղգին դրամները
յուժպէտս վատնելէն անանկացող կարգ մը
մեռեալ ընկերութիւններուն յատուկ դամ-
բարանին մէջ ամիսիւնուեցաւ:

Պարոն Բոժոժիկ պարագային յարմար դամբա-
նականով մը վեր հանեց բարձրացուց այս
վարիչ ժողովին գործերը ու սա վերջաբանով
հանդէսը փակեց:

« Գերեզմանը խո՛ր ըլլայ,
Հողն ալ առա՛տ ըլլայ »:

Բոժոժիկ կըսէ թէ՛ հանգուցելոյն գա-
գաղը պատրաստող տաղձագործին տրուելիք
5 թրանքը ճարելու համար որոշուեր է Փառ-
սա մը պտտցնել, ձեռամբ թաշկինակ կամ
գաւաթով դրամ հաւաքել կարգ մը խաբէս-
խուրէսներու: Աչուրնին լոյս, իրենց գործ ելաւ,

ԱԶԳԱՅԻՆ

—0—

Երուսաղէմայ Միաբանութիւնը Հոկտեմ. 31ին 'ի ժողով գումարուելով, որուն նախագահեր է Տ. Յարութիւն Ս. Պատրիարիարք, միաձայնութեամբ որոշեր է եպիսկոպոսական վկայական տալ Երուսաղէմայ Պատր. Փոխանորդ Տ. Գեորգ Ծ. Վարդապետի, գնահատելով անոր 30 տարիներէ 'ի վեր Միաբանութեան մատուցած ծառայութիւնները:

Սոյն որոշումը հետագրաւ հաղորդուեր է Տ. Գ. Ծ. Վ. երէցեանի. Տ. Յարութիւն Ս. Պատրիարքն ալ օրհնութեան կոնդակով մը շնորհաւորեր է զայն:

—0—

Հոկ. 25ին Տփղիսէ Ղարս և շրջակայ կողմերը զրկուեր են գաղթական 120 բնտանիք, որոց երկաթուղւոյ տոմսակը ոստիկանութիւնը գներ է:

—0—

Նոյ. 5 թուականաւ Արմաշէ կը գրեն թէ, այս տարի հոն աշնան ձիւն տեղացեր է որ ահագին ծառեր գետին տապալեր են ու ճամբաները գոցուած ըլլալով երթուկութիւնը դժուարացած է:

—0—

Պ. Ամիրխանեանց, խել մը չքաւոր գաղթական աղջկանց իրեն գիմելով ըրած աղաչանքներնուն չկրնալով դիմանալ, այս շաբթու նորէն իր արհեստանոցը բացաւ ուր ընդունուեցան 75 աղջիկներ, որոնց թէ ցորեկուան և թէ իրիկուան ուտելիքը ըստ աւանդոյն սկսաւ տրուիլ:

Կը յուսանք թէ անցելոյն դառն փորձութենէն խրատուած՝ ալ ևս հաւատարմաբար կ'աշխատին այդ աղջիկները:

—0—

Ռուսճուրի ընթերցարանին մէջ բանաստեղծութիւնը սկսեր են Վ. բանաստեղծութիւնը

ըրեր է վարժարանին Տնօրէն Տեոր Սպահիւլեան, իրեն նիւթ ընտրելով Արեւելեան հարցը. իւր բանաստեղծութիւն լաւ ազդեցութիւն ունեցեր է ներկայից վրայ:

—0—

ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ռուսճուրէ եկած մասնաւոր նամակներէ բերկրութեամբ տեղեկացանք մեր վաղեմի բարեկամ Տեոր Լեոն Սարաֆեանի նշանաստեղծութիւնը ընդ Ալն. Օրիորդ Աննիկ Ծերունեանի:

Կը փութանք մեր ջերմ խնդակցութիւնը յայտնել յիշեալ երկու բարեհաճաւ գերդաստանի ամեն անդամոց, 'ի մասին այդ երկու սիրտոստ աւմաւենեայ նշանաստեղծեանը:

—0—

Անցեալ շաբթու Բենիկ Յակոբեան հասցէին ապահովագրեալ կարեւոր նամակ մը եկած է Պոլսէն, այդ անձը պարտի դիմել անդույս Ս. Եկեղեցին Տեոր Ռուսէն Համբարձումեանի և նամակն ընդունիլ:

Երեմ Ստորագրողներուն

1. Ծանուցեալ նպարտաճառը իր Օգոստոս ամսոյ մէջ ըրած առաւտուրէն 30 շրշ. կոշկակարն ալ 40 շրշ. յանձնած են Աղքատախնամին: Ցարդ ուրիշ վճարում չեն ունեցած:

2. Հայկական զինանշանով ծախու հաւաքած սիկարի թուղթին տէրերը թէեւ 'ի սկզբան տեղույս Պատ. Հոգաբարձութեան դիմեր են պրակները կնքել տալու, բայց Հոգաբարձութիւնը ինչ ինչ արդարացի պատճառներով այդ թուղթին վրայի գրուածքին մէջ բարեփոխում մը առաջարկելով՝ ըստ այնմ պատրաստականութիւն յայտներ է պրակները կնքելու եւ գծնթոյլի տակ առնելու, սակայն թուղթին տէրերը չեն ուզեր

համակերպիլ : Հեհեւարար , շահուն 100ին
25ը Պուլկարիոյ Ազգային վարժարանաց 'ի
նպաստ անունով հրապարակ ելած սոյն սի-
կարի թուղթը՝ ըստ օրինի Հոգաբարձու-
թեան կողմէ գօնթրօյի տակ առնուած չէ
ու վեցամիսներէ 'ի վեր քաղաքիս մէջ ծախ-
ուածներուն 'ի հաշիւ եւ ոչ մէկ սանդիմ
վճարուած չէ Ազգային վարժարանի սըն-
տուկին :

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ՄԱՌԻ

Յաւէտ անձնուէր սիրողդ եմ արի
Լուր ինձ ո՛վ աղջիկ գեղադէմ , ա՛րի .
Կեանքիս մէջ միայն պահ մը համ առի .
Այն օրն էր ուր դու , ո՛չ քնաղ Մառի
Ըսիր թէ սրտիդ սիրտս յարՄարի .
Եւ անբաւ հեշտանք հոն կը գուՄարի .

Իսկ եթէ աշունն ինչպէս աՄառի ,
Յաջորդել իրեն պարտք կը համարի .
Վաղանձուկ ըլլայ սէրդ ալ , շուտ Մարի ,
Այժմէն անունս ալ մէջ այն տօՄարի
Տեսնեմ ուր գրուի անուն յիՄարի ...
Եթէ դիս մոռնաս , ո՛վ չքնաղ Մառի ,
Դիմում պիտ' ընեմ երկնից կաՄարի ,
Որ քեզ մրկելու ցըմիշտ յաՄառի :

ՕՄԻՐԷ

ՍԻՒԱԼԱ ՃԵՎԱՊ

Կէչէն ճուստա երթեսի կիւնիւ նէշը
օլունան "Իրաւներ , կազէթասընտա՝ Սիսակ-
եան ընկերութիւնուն միւթէվէֆա Դործ .
Ժողովընա խիթապէն իրատ օլունան աթիտէ-
քի ալթը սիւալլէրէ Բոթոթիկ թարաֆընտան
վերիլէն ճէվապար :

1. Իւչ սէնէ մուգատտէմ՝ մէվճուտ
օլան 1600 ֆրանք նէ՞ օլտու :

— Միւթէֆէրիգա մէսարիֆ նամըլլա
եռտիչի օլտու :

2. Գործ . Ժողով հէսապլարընը քիմէ՞
վէրտի .

— Պիրիպիրլէրինէ , զիրա , փարա քէնտի
եհտլէրինտէ օլտուղու իչիւն՝ հիսապլտա
իչլէրինտէ գաբամըշլար :

3. Ընթերցարան քիւշատ օլընտըգտան
պէրու բաւնեպին թօբլանմագ իչիւն նէ՞ սէ-
պէպլէ բաթանորդլարա միւրաճաաթ օլըն-
մատը :

— Եիւզլէրի օլմատըղը իչիւն :

4. Գործ . Ժողով՝ գանունամէ մուճի-
պինճէ՝ միւտտէթի խիթամ պուլտըղը էս-
նալէրտէ նէ՞ իչիւն հէսապլը կէօսթէրմէտի
վէ էհալինին արղուսը վէ միւրաճաաթլարը
խիլաֆընտա մէմուրիլէթէ տէվամ իտէճէ-
կինէ իսրար իթտի :

— Չիւնքի , քէյֆի մայէշա խարճանա-
ճագ պիր մըգտար հաղըլ փարա տահա վար
ըտը :

5. Շիմտի բարա պիթտիգտէն սօնրա
իշտէն էլլէրինի չէքիօրլարսա , պըրադտըդ-
լարը պիր գաչ եիւզ ֆրանգ պօրճը քիմ
էօտէյէճէք տիր :

— Պէն , սէն , եանի միլլէթ էօտէ-
յէճէք :

6. Գործ . Ժողով նէ՞ մէհգունիլէթլէ
"Սիսակեան ընկերութիւն , իսմինի գալտը-
րուպ , քէնտիլլէրինէ "Վարչութիւն ընթեր-
ցարանի , իւնվանը վերիյօր :

— Ճախա օլտուն տէյի . զիրա , տիւն-
եատա պու միսիլլիլէր ճախայը սէվէր :



ՃԱՀԱՐԱՆ ԱՐԱԳԱԾ

Սոյն ճաշարանը այս անգամ Տեար
Կէորդ ֆափաղեանի տնօրէնութեանը յանձ-
նուած է , ուր ըստ առաջնոյն կը գտնուին
համաբամ կերակուրներ . Պատուարժան
յաճախորդք խիստ գոհ պիտի մնան թէ
կերակուրներէն եւ թէ գիներու անմրցելի
աժանութենէն :





Հետեւեալ զուարճալի պատմութիւնը
Լոնտրայէն ղրկուած է մեզի :

Ի ԱՂԻ ԹՈՒՂԹԸ

Կլասքոյի եկեղեցւոյն մէջ արարողութեան տանն ինչարտ Միլթըն անունով պարզ զօրական մը՝ իր ընկերներուն պէս աւուր պատշաճի աւետարանը մէջը փնտռելու համար գրպանէն Աստուածաշունչ մը հանելու տեղ, առջեւ տարածեց խաղի մը թուղթը :

Այս արտակարգ ընթացքը իսկոյն նըշմարուեցաւ թէ եպիսկոպոսէն և թէ գումարտակի յիսնապետէն . այս վերջինը հրամայեց որ թուղթերը վերցնէ, ու երբ զօրականը մերժեց, յետ աւարտման եկեղեցւոյ զայն առաւ բաղքին դատաւորին ներկայացուց, որուն ըզոգեց ինչարտի անպատշաճ վարմունքին դէմ :

— Տեսնենք, ի՞նչ պէս պիտի արդարացնէք ինքզինքնիդ սոյն օրինակ գայթակղական ընթացքի մը դէմ, ըսաւ դատաւորը, եթէ օրինաւոր պատճառներ ունիք՝ լաւ, հակառակ պարագային՝ խստիւ պիտի պատժուիք :

— Որովհետեւ ձեր բարեսրտութիւնը ինձ կ'արտօրնէ դատս պաշտպանել, պատասխանեց ինչարտ, ուստի կաղաչեմ որ լաւ ունկնդրէք :

— Խօսեցէ՛ք :

— Ես՝ 6 բէնս (3 դահեկան) ռոճիկով ութ օրուան ընթացք մը ըրած եմ . դուք իսկ, տէր դատաւոր, կրնաք խոստովանիլ թէ այս գումարը հազիւ բաւական կըլլայ մարդու մը օրապահիկն հոգալու, հետեւաբար,

Աստուածաշունչ, Աղթագիրք եւ ուրիշ նմաններ չի կրնար ունենալ : Արդ, տեսէք թէ ես խաղի թուղթերով զանաւոր ի՞նչպէս կը ճարեմ :

Զայս ըսելէ ետքը ինչարտ խաղի թուղթերը հանեց ու դատաւորին Միաւոր (Ասօ) մը ցուցնելով շարունակեց :

— Երբ Միաւոր մը կը տեսնեմ, ներեցէ՛ք որ ըսեմ, կը յիշեմ թէ Աստուած մը կայ միայն . երբ կը տեսնեմ 2 նոց կամ 3 նոց մը, միտքս կը բերեմ զՀայրն և զՈրդին, կամ զՀայրն, զՈրդին և զՍուրբ Հոգին : 4 նոցն ինձ կը յիշեցնէ աւետարանիչները, Մատթէոս, Մարկոս, Ղուկաս և Յովհաննէս : 5 նոցն հինգ իմաստուն կուսանքները որք վառեալ լապտերօք պիտի ներկայանային, թէեւ տան էին այդ պատուէրն ընդունողները, բայց ձեր վերապատուութիւնը կը յիշէ թէ հինգն իմաստուն եւ հինգն յիմար կուսանք էին :

6 նոցը ինձ կըսէ թէ Աստուած վեց օրէն ըստեղծեց զաշխարհ : 7 նոցը՝ թէ եօթերորդ օրը հանգչեցաւ : 8 նոցէն կը յիշեմ այն ութ առաքինի անձինքը՝ որոնք ջրհեղեղէն աղատեցան, այսինքն Նոյ եւ իր կինը, երեք որդիքը ու իրենց հարսերը . 9 նոցն ինը բորոտներն են, որոնք Փրկչէն բժշկուեցան, տոսն էին թէեւ բայց մէկը միայն շնորհակալ եղաւ Անոր : 10 նոցը տասնաբանեայ պատուիրանքները կը յիշեցնէ ինձի : 3 ետոյ Սակրաւորը (ՏՃ. Պաճագ, Անգղ. KNAVE) (*) մէկ կողմ դնելէ ետքը, թագուհին ձեռք առաւ ու շարունակեց իւր բացատրութիւնքը :

— Տէ՛ր դատաւոր, այս թագուհին ինձ կը յիշեցնէ Սաբայի թագուհին, որ երկրիս մէկ ծայրագոյն կողմէն եկաւ Սողոմոնի իմաստութիւնը փորձելու, ու թագաւորը (Թահլը) իւր ընկերակիցը, ինձ կը յիշեցնէ երկնից թագաւորն եւ մեր ինքնակալ Գէորգ Գ :

— Խիստ բարի. ըսաւ դատաւորը . ա՛մնն թուղթերուն վրայ տուած բացատրու-

(*) KNAVE Անգղերէն կը նշանակէ Ծառայ կամ Ստահակ :

թիւնդ գոհացուցիչ է , բաց 'ի Սակրաւ-
րէն :

— Եթէ ձեր վերապատուութիւնը հա-
ճի ինձ գէտ չի ներդաշնալ , գայն եւս պիտի
բացատրեմ ա՛յնչափ ճշգրիտ ինչպէս որ
միւսները բացատրեցի :

— Ո՛հ , ստուգիւ չպիտի սրդողիմ :

— Հատ լաւ , ուրեմն կըսեմ , Սակ-
րաւորները ստահակ կըլլան , ու ամենէն
մեծագոյնը մեր յիսնապետն էր որ զիս ձեր
առջեւ բերաւ :

— Չգիտեմ թէ մեծագոյնն ստահակն
է թէ փոքրագոյնը , ըսաւ դատաւորը քըմ-
ծիծաղով . այլ անտարակոյս երկուքէն յիմա-
րագոյնը :

Զօրահանը շարունակեց :

— Երբ խաղին թիւերը համընձ , 365
կը գտնեմ , ճիշտ տարւոյն օրերուն չափ , երբ
թուղթերուն հատերը համընձ 52 կը գտ-
նայմ , որ ըսել է՝ այն չափ ալ շաբաթներ
երբ կոտորւածները (*) թուեց 12 կը գըտ-
նեմ . այն չափ ալ ամիս : Արդ , տէ՛ր դա-
տաւոր , կը տեսնէք որ այս խաղի թուղթը
ինծի համար Ս . Գիրք , աղօթագիրք և Օ-
րացոյց է միանգամայն :

""

Դատաւորը իր ծառաները կանչելով
հրամայեց որ սոյն երիտասարդ զօրահանը
մեծարեն եւ անոր քիչ մը դրամ տան . խոս-
տովանելով միանգամայն թէ՛ նա ամբողջ
դնդին ամենէն խելացի ու զուարճարան
ստահակն էր :

(*) Բիքէթ անուն խաղը 12 կը հա-
շուտի :

ԳՈՐԾԱՆՈՐԱՅ ՀԱՄԱՐ

Ա՛ռկէ՛ք աժան ճաշ մը ընել , գիմեցէք
հօթէլ Ցօլլիչ , Գրիգոր Քիւչիւքեանի ճաշա-
րանը , համագամ կերակուրներ պիտի գտնէ՛
ործաւորի քսակին յարմար :



Աժանս Բոժոժիկ եւ Ընկ

Ափրիկէ

Աղքատանամը 100 նապաստակի
կողք փայտ ապսպրեց Ափրիկէի անտառնե-
րուն , որ յառաջիկայ թղթատար շոգենաւով
ճամբայ պիտի հանուին :

Վառնա

Ցաւակցական հեռագիրներ կը տեղան
հանգուցեալ վարիչ պաշտօնէութեան բա-
րեկամաց :

Պուրկազ

Տեղւոյս վաւժարանին յատուկ դրամարկ-
դին յատակը իյնալով՝ տիպսիզ քիչէ գար-
ձաւ :

Կ . Պոլիս

Օրմանեան Պատրիարքը Եկեցցէ ըսելէն
գլուխ առած չունի որ աղգին գործերը
տեսնայ :

Իզմիր

Ըստ պաշտօնական տեղեկագրի , անց-
եալները հրէից և յունաց մէջ տեղի ունե-
ցած կռիւին արդիւնքն է՝ վերաբոլեալ 25
թիւ և 13 գնդակ գլուխ հրէից :

Քիթերնին վերաւորաւած հրիաներէն
20ը սկսան խըւ խըւ խօսիլ :

Պիթբազար

Խօլթուլաճի մը 13 զրշ . 10 փարայ
կուտայ ընթերցարանի սեղաններուն , աթո-
ռակներուն ու գրադարանին համար . իսկ 5
ամիսներէ 'ի վեր քարիւղի երես չի տեսնա-
լէն ժանդոտած 2 զամբարներուն համար 7
զրշ . կառաջարկէ :



ՈՒՐՈՒԱԳԻՐ

Ֆրանսական, Անգլիական եւ Գերմանական
կանանց .

Ֆրանսական կինը կոմունանայ շահա-
սիրական խորհրդով . Անգլիական կինը, որով-
հետեւ սովորութիւն է ամուսնանալը, իսկ
Գերմանական կինը սիրելուն համար :

Ֆրանսական կինը կը սիրէ իւր ամու-
սինը մինչեւ հարսանիքի շաբաթներու վերջը,
Անգլիական կինը կեանքի ժամանակ, Գեր-
մանական կինը յաւիտեան :

Ֆրանսական մայրը կը տանի իւր աղ-
ջիկը պարահանդէս, Անգլիական մայրը եկե-
ղեցի . Գերմանական մայրը կը պարապեցնէ
իւր աղջիկը խոհանոցի մէջ :

Ֆրանսական կինն է հանճար եւ երե-
ւակայութիւն, Անգլիական կինն իմացողու-
թիւն, Գերմանականը զգացողութիւն :

Ֆրանսական կինը կը հագուի վայել-
չապէս, Անգլիականն տձեւ կերպով, Գեր-
մանականը համեստաբար :

Ֆրանսական կինն շատախօս է, Անգ-
լիականը կը խօսի, Գերմանականը կը դատէ :

Ֆրանսական կինը կը մատուցանէ մի
վարդ, Անգլիականը մի շուշան, Գերմանա-
կանը մի պարզ ծաղիկ :

Ֆրանսական կնոջ գերազանցութիւնը
նորա լեզուին վրայ է . Անգլիական կնոջ
առաւելութիւնը նորա գլխուն մէջ . Գեր-
մանական կնոջը իւր սրտին մէջ .

ՎԷՄԱՆ

Բոժոժիկ— Իսկ Հայ կանանց գերազան-
ցութիւնը բազմասանքի մէջ է, վասն զի ի-
րենց աղջիկներուն ուրիշ բան չեն սովորեցներ :



Եկեղեցւոյ մէջ պսակի արարողութիւնը
կատարուելու էր . հարսն ու յիստայն խիստ
տգեղ էին . հանդիսականք քահանայէն խընդ-
րեցին պարագային յարմար երկու խօսք ը-
սել . քահանայն խօսքը նորապսակեալներուն
ուղղելով ըսաւ, « Սիրելիք, սիրեցէք զմիմ-
եանս, զի եթէ չի սիրէք, ո՞վ պիտի ուրե-
ղձեղ » :

— 0 —

Երկու մտերիմ պարոններ, որոց մին
ծխամուկ էր, իր սիկարոն բարեկամին քթին
մօտեցնելով կը հարցնէ .

— Սիկարոս ի՞նչ կը հոտի .

— Խողի մաղ .

— Ա՛, ներեցէք, կարծեմ թէ մօրուբ-
նիդ այրեցի .

— 0 —

Մայր եւ աղջիկ,

Սիրելի աղջիկս, քեզ հարուստ մարդու
մը հետ պիտի ամուսնացնեմ, կը յուսամ
թէ չպիտի դժկամակիս ունեցած մէկ պա-
կասութեանը համար . այն է թէ՛ 80 տա-
րեկան մարդու մը դէմքն ունի, թէեւ 30
տարեկան է :

— Ո՛հ մայր իմ, երանի՜ թէ 80 տա-
րեկան ըլլար բայց երիտասարդի դէմք ու-
նենար . վասն զի այն ոտեն մենք ալ իւր
ձգելիք ժառանգութիւնը շուտ մը կը վայե-
լէինք :

— 0 —

Մեծախօսիկ մը կը պարծենար թէ լաւ բարերէն լեզուին բոլոր բառերուն տեղեակ է.

— Ուղտին ի՞նչ կըսեն, հարցուցին իրեն.

— Ո՛հ, ամա մեծը հարցուցիք...

— Լաւ, մըջունին ի՞նչ կըսեն.

— Ամա պղտիկը հարցուցիք:

— Ոչխարին.

— Ղանըմ կըսեն,

— Կեցցես, հապա Մաքի՞ն,

— (Մեծախօսիկը մտածելով) Եղբայր, ատեն մը բան մ'ալ չեն ըսեր, ետքը նորէն Ղանըմ կըսեն...

— 0 —

Դպրոցական

Հայրը՝ որդւոյն.

— Տղաս, Ս. Պատմութիւն գիտե՞ս:

— Հապա, աղկը գիտեմ:

— Հատ լաւ. ըսէ՛նայիմ, Ագամ՝ ո՞վ էր:

— Դեռ հոտ հասած չ'ենք, հայր...

ԻՄՈՍՏՐՈՒՄ ԵՒ ԴՆԱՆՍ

Պօնտուս միւսիւ վէնսան:

— Պօնտուս է՞լ թիէն:

— Տիւն մատամընդը Գարլօ գօլթուղունա ալմըջ Սէնդ. Անթուան քիլիսէսինէ կիտէյօր ըտը, սէնին մալիւմութըն վա՞ր մը.

— Քրիստոնեա՞ծա շէյ օլտուգտան սօնրա՞ մալիւմութըմ՝ օլմուշ օլմամըջ՝ պէյիս եօգ:

— 0 —

Պիլ, Գըզ մէքթէպինտէ.

— Սէյլէ պագայլմ Մարիէթ, սէվմէք Փաիլինին միւսթագպիլի նա՞սըլ կէլիւր.

— Գօճայտ վարմագ:

— 0 —

Իբի ահպապ արասընտա.

— Տէմէք՝ օղունուղը հօճալըղա եէթիշտիւմէք իսթէյօրսընըզ, Փէնա՞ տէյիլ տմ-

մա՝ չօճուղըն պունա իսթիտատը վա՞ր մը.

— Նա՞սըլ եօգ, շու սինտէ պիլէ էն զիյատէ սէվտիղի շէյ՝ քիւշիւք չօճուղալը տէյօմէք տիր:

Ա Ձ Դ

Վայրկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

100 հատը 2 ֆր. ի կը տպագրուի և նոր տուփին մէջ կը գտնուի Այցետոմսի գործածութեան հրահանգը պարունակող տետրակ մը, որուն կողքին վրայ այցետոմսին տիրոջ անունը տպագրուած պիտի ըլլայ: Դիմել խմբագրութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմի յանձնարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նախապարօշմ կ'ընդունուի: Կանխիկ:

— 0 —

ԷՐԲԷՅԻՆ ՖԷՆՏԻ

Գ Ա Ր Ը Յ Ը Ե Է Ն Տ Ի

Գըշ կէճէլէրինէ մախսուս զայէթ կիւլիւնճլի վէ էյլէնճէլի իշպու գօմէտի 32 սահիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը Էրմէնիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարագ Վարնատա թիւթիւնճիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ ֆիաթլէ սաթըլմագտա տըր: Թաշրալարտան իսթէյէնլէր հալընըզ 30 սանթիմլիք բօսթա բուլը զիրտէ մուհարրէր նամըմա կէօնտէրմէլի տիրլէր,

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 նճի Ուչասթ, 1104

Վ Ա Ռ Ն Ա

Պունտան պէյլէ սաիր էյլէնճէլի վէ ֆախալի գօմէտիլէր տախի բէյտէրքէյ նէշը օլունաճաղը պէյան օլունըր:



Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԵՍԻ

Այցետոմն, հասցետոմն. նամակա-
գլուխ, հրաւիրատոմն, բարենիշ, տոմ-
ոակ, եայլն եայլն թէ՛ պարզ և թէ՛
ոսկեզօծեալ սէկ քանի գոյներով կը տը-
պագրուին: Քաղաքներէ եկած յանձնա-
րարութիւնք փութով կը կատարուին:
Գին գոհացուցիչ: Դիմել Հայելիի խըմ-
բագրութեան:

—o—



ԱՐՄԵՆԱԿԱՆ ԳԱԼԻՄԱՆ

Արդկող (Իթիւ գօլ)

Եւրոպայէ բերել տուած
նոր գործիքներով շապիկ,

թենց, վզնոց, կանանց միսներ և այլ ձերմա-
կեղէններ կ'արդուկէ, անանկ որ՝ նորէն զա-
նազանէլը անհնարին է: Գին գոհացուցիչ:
Դիմել Մուսալլա Պ. Ա. Զարպհանէրեանի խա-
նութ:

—o—

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱԾՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԳ. ԵՐԳԵՐՈՒ
ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՖՐԱՆՔ

—o—

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'ըս-
պասուէր ժամանակէ մ'ի վեր, 216 էջերով,
մեծ խնամքով սրբագրուած, բաց ի հին ըն-
տիր երգերէ կը պարունակէ նաեւ բազմա-
թիւ նոր երգեր:

Դիմել ա Մ. ԽԱԶԻԿԵԱՆ ՎԱՌՆԱ

2րդ. Քթաղ, Արեւելեան Տպարան, 1140.

—o—

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

Եւ Յուրարան

(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՁՈՒՓ

Վառնա 5րդ թաղ Եւլտղ Թապիա

Ամէն տեսակ մեքենաներու. շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաև շո-
գեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթայ գործիքներ, դրամական
գասաներ, շէնքու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն և այլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդ միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

—o—

ԼԵՒՈՆ ԱՃԷՄԵԱՆ

Ոսկերիչ - Փորագրիչ



Ոսկի, արծաթ և
ուրիշ ամեն տեսակ
մտաղէ տուփերու,
ժամացոյցերու, բօրդ
մէններու և մատա-
նինքու թէ վրան ևւ

Թէ մէջը Մօնէկրամ և Անտրյասէ մար-
գաներ ու գիրեր փորագրող, ամեն լեզուէ
թէ անձնական և թէ վաճառականական կը-
նիքներ պատրաստող, նաև ոսկերչութեան
վերաբերեալ ամեն տեսակ գործեր կը շինէ:
Դիմել ի Վարնա, Ուլիցա Թունանցքա Տի-
ար Տիգրան Գալֆանեանի խանութը, թիւ 310

Отговоренъ редакторъ: Н. Драгулов.
Печатница «Всѣмнѣсть» — Варна